ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ՈՒՂԱՐԿԵՑ ԻՆՁ...

ԾՆՈՒՆԴ 45.8

*8 Եվ հիմա, ոչ թե դուք ուղարկեցիք ինձ այստեղ, **բայց՝ Աստված**: Նա ինձ դարձրեց փարավոնի հայր, նրա ողջ տան տեր և Եգիպտոսի ամբողջ երկրի իշխան:*

1. ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ... ՈՒՂԱՐԿԵՑԻՔ ԻՆՁ:

Հովսեփն իր կյանքում հասկացել էր երկու բան.

- *Նա հասկացավ՝ Ո՛վ էր իրեն ուղարկել և ԻՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ:*
- *Շատ մարդկանց կյանքը փրկելու համար (Ծննդոց 50.20):*

Հակոբն ասաց. Գնա՛, տե՛ս՝ եղբայրներդ ու հոտը լա՛վ են, և ինձ լո՛ւր բեր (Ծննդոց 37.13-14):

Բայց Աստված նրան նրանցից առաջ ուղարկեց՝ նրանց կյանքը փրկելու:(Սաղմոս 105.17):

*9 Նահապետները, Հովսեփին նախանձելով, նրան Եգիպտոս վաճառեցին, **բայց Աստված նրա հետ էր** 10 և նրան իր բոլոր նեղություններից ազատեց... (Գործք 7.9-10)*

- ***Աստծու ներկայությունը՝ իմ նեղությունների մեջ:***

Տերը Հովսեփի հետ էր Պետափրեսի տանը (Ծն. 39.2):

Նրա տերն էլ տեսնում էր, որ Տերը նրա հետ է(Ծն. 39.3):

Տերը Հովսեփի հետ էր նաև բանտում և նրա հանդեպ ողորմություն էր ցուցաբերում (Ծն. 39.21):

Բանտապետը վստահում էր Հովսեփին, որովհետև Տերը նրա հետ էր և հաջողեցնում էր նրա գործերը (Ծն. 39.23):

- ***Ամեն ինչ սկսվեց երազից, բայց երազը ամբողջ ճանապարհը չբացահայտեց:***

- *Առաջին երազում Հովսեփը տեսավ, որ եղբայրների խրձերը խոնարհվում էին իր խրձի առաջ: Երկրորդում տեսավ արևը, լուսինը և տասնմեկ աստղերը, որոնք խոնարհվում էին իր առաջ. Սակայն այդ երազներում Հովսեփը չտեսավ Եգիպտոսը, փարավոնին, ստրկությունը կամ բանտը:*

  *Տարիներ անց՝ իր «Բայց Աստված...» պահին, նա արդեն կարողացավ ասել. **«Նա ինձ ուղարկեց...»:***

  «Եվ Նա ինձ դարձրեց„»:

ՆԱ ԻՆՁ ԴԱՐՁՐԵՑ ՓԱՐԱՎՈՆԻ ՀԱՅՐ.

Առաջին բանը, որ Աստված վերականգնում է, հայրությունն է

Քրիստոսի միջոցով մենք վերադառնում ենք Հոր մոտ, ընդունում որդեգրության Հոգին և աղաղակում՝ “Աբբա՛, Հայր”ե (Հռոմեացիներին 8.15):

***11** Ինչպես գիտեք, ձեզանից ամեն մեկին, ինչպես հայրը՝ իր զավակներին, **12** հորդորում և մխիթարում էինք ու աղաչում, որ ընթանաք, ինչպես որ վայել է Աստծուն, որ ձեզ կանչեց իր արքայության ու փառքին (Ա Թես 2.11-12):*

- *Հովսեփի կյանքում այդպիսի հոգատարություն ենք տեսնում նրա եղբայրների հանդեպ:*

  ***19** Հովսեփն ասաց նրանց. Մի՛ վախեցեք, միթե ես Աստծու փոխանորդն եմ: **20** Թեպետ դուք խորհեցիք իմ դեմ չարիք գործել, **բայց Աստված** խորհեց այն փոխել բարիքի, որպեսզի աներ այն, ինչ եղավ այսօր, այսինքն՝ շատ ժողովուրդ ապրեցներ: **21** Եվ հիմա*
  (1) մի՛ վախեցեք,
  (2) ես կկերակրեմ ձեզ ու ձեր երեխաներին:
  (3) Եվ մխիթարեց նրանց ու քաղցրությամբ խոսեց (Ծն.50.19-21)

  Օրհնյա՛լ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, Հայրը գթությունների և Աստված ամեն մխիթարության, որ մեր բոլոր նեղությունների մեջ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն

տեսակ նեղության մեջ են, այն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց (Բ Կոր. 1.3-4)։

ՆԱ ԻՆՁ ԴԱՐՁՐԵՑ ՓԱՐԱՎՈՆԻ ՀԱՅՐ.

- **ՆԱ ԻՆՁ ԴԱՐՁՐԵՑ ՆՐԱ ՈՂՋ ՏԱՆ ՏԵՐ.**

*Եբրայեցիներին 3.5-6-ում Մովսեսը նկարագրվում է որպես Աստծու տան մեջ հավատարիմ ծառա, **իսկ Քրիստոսը՝ որպես Որդի՝ Իր տան վրա**: Եվ այդ տունը մենք ենք, եթե մինչև վերջ ամուր պահենք մեր վստահությունն ու հույսի պարծանքը։*

Մարկոս 13.34-37-ում Հիսուսը պատմում է ճանապարհ գնացող մի մարդու մասին, որն իր տունը թողնում է, ծառաներին իշխանություն տալիս, յուրաքանչյուրին՝ իր գործը, և դռնապանին պատվիրում արթուն մնալ։

- **ՆԱ ԻՆՁ ԴԱՐՁՐԵՑ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԲՈՂՋ ԵՐԿՐԻ ԻՇԽԱՆ.**

Փարավոնը Հովսեփին նշանակեց ամբողջ Եգիպտոսի վրա՝ իրենից հետո ամենաբարձր իշխանությամբ (Ծն. 41.39-44)։

Հիսուսն ասաց. Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա (Մատթեոս 28.18)։

ՀՈՎՍԵՓԻ ՎԵՐՋԻՆ «ԲԱՑՑ ԱՍՏՎԱԾ»-Ը

«Բայց Աստված»-ը հնչեց մահվան շեմին.

ԾՆՆԴՈՑ 50.20,24

*20 Թեպետ դուք խորհեցիք իմ դեմ չարիք գործել, **բայց Աստված** խորհեց այն փոխել բարիքի, որպեսզի աներ այն, ինչ եղավ այսօր, այսինքն՝ շատ ժողովուրդ ապրեցներ։*

*24 Հովսեփն ասաց իր եղբայրներին. Ահա ես մեռնում եմ. **Բայց Աստված** անպայման կայցելի ձեզ, կհանի ձեզ այս երկրից և կտանի այն երկիրը, որ երդվեց տալ Աբրահամին, Իսահակին և Հակոբին։*

2. ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ... ՆԱ ՁԵԶ ԿԱՅՑԵԼԻ։

Եվ որոնց նախասահմանեց, նրանց էլ կանչեց, և որոնց կանչեց, նրանց էլ արդարացրեց, և որոնց արդարացրեց, նրանց էլ փառավորեց (Հռոմեացիներին 8.30)։

Այս համարում ընթացքն այսպես է. Նախասահմանեց → կանչեց → արդարացրեց → փառավորեց։

- ***Հովսեփի կյանքի չորս «ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ» պահերը***

  ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ՈՒՂԱՐԿԵՑ ԻՆՁ...
  Աստծու նպատակը՝ իմ ճանապարհի մեջ։ (Ծննդոց 45.8)

ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ՆՐԱ ՀԵՏ ԷՐ...
Աստծու ներկայությունը՝ իմ նեղությունների մեջ։
(Գործք Առաքելոց 7.9-10)

ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ԴԱ ԲԱՐՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԵՑ...
Աստծու բարի նպատակը՝ մարդկանց չար մտադրությունների միջով։ (Ծննդոց 50.20)

ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՅՑԵԼԻ ՁԵՋ...
Աստծու հավատարմությունը՝ նաև հաջորդ սերնդի համար։
(Ծննդոց 50.24)

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ